**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01» ծածկագրով հայտերի բացման նիստի**

ք. Երևան — 09 հունվարի, 2017թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ /ԳՊ/ԳԱՊ/՝ — Ա. Շահինյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ — Է. Գրիգորյան

/ԳՊ/ԳԱ/՝ — Ա. Քյոսեյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Վ. Ղազարյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Լ. Ադամյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ — Ա. Կարապետյան

1. «ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2018թ.-ի հունվարի 09-ին, ժամը 11:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| | | |
|---|---|---|
| 1 | <<Կոմպլաբ>> ՍՊԸ | ք.Երևան, Քանաքեռ 17 Փ, տուն 9 |
| 2 | << Յուքոմ>> ՍՊԸ | ք. Երևան, Տերյան 19, բն.4 |

3. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: <<Յուքոմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ <<Կոմպլաբ>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման վճարման պահանջագիրը, ուստի հանձնաժողովը որոշեց <<Կոմպլաբ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Յուքոմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի նախահաշվային գինը | Մասնակցի անվանումը և Առաջարկված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | <<Յուքոմ>> ՍՊԸ | | <<Կոմպլաբ>> ՍՊԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ ՀՀ դրամ | ներառյալ ԱԱՀ ՀՀ դրամ | առանց ԱԱՀ ՀՀ դրամ | ներառյալ ԱԱՀ ՀՀ դրամ |
| 1 | Համացանց | դրամ | 1 | 4800000 | 5000000 | 6000000 | 5500000 | - |

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

6. Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Յուքոմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցները՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հրապարակված գնումների պլանը:

7. Հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման նպատակով: Հաջորդ նիստը տեղի կունենա ս.թ. հունվարի 11-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

**«ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01» ծածկագրով հայտերի բացման նիստի շարունակություն**

ք. Երևան

11 հունվարի, 2018թ.
ժամը՝ 11:00

8. 2018թ. հունվարի 11-ին ժամը 11:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01>> ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված նվազագույն գնային առաջարկների նվազեցման նպատակով: Բանակցություններին ներկայացել է <<Յուքոմ>> ՍՊԸ-ի տնօրենը, որը բանակցությունների արդյունքում ներկայացրեց նոր գնային առաջարկ՝ 4800000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

9. Ներկայացված հայտերի հիման վրա <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց.

*- 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել.*

<<Յուքոմ>> ՍՊԸ -ին

10. Հանձնաժողովը որոշեց <<ՀՀ ԱՎԾ-ԳՀԾՁԲ-2018/01>> ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը նշանակել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից գնահատման թերթիկները քարտուղարին ներկայացնելու հաջորդ աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 613 աշխատասենյակում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------------------ Ա. Շահինյան
ԳՊ/ԳԱՊ

Անդամներ՝ ------------------------------------------------------ Է. Գրիգորյան
ԳՊ/ԳԱ

ԳՊ/ԳԱ ------------------------------------------------------ Ա. Քյոսեյան

ԳՊ/ԲԱ ------------------------------------------------------ Վ. Ղազարյան

ԳՊ/ԲԱ ------------------------------------------------------ Լ. Ադամյան

Քարտուղար՝ ------------------------------------------------------ Ա. Կարապետյան
/ԳՊ/Միմ/